Հավելված N 2
ՀՀ վարչապետի 2018 թ.
սեպտեմբերի 19 -ի N 1230 - Ն որոշման

Հ Ա Շ Վ Ե Տ Վ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն
ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1.Անունը, ազգանունը.

Արսեն Թորոսյան

2. Զբաղեցրած պաշտոնը.

ՀՀ առողջապահության նախարար

3. Գործուղման վայրը և ժամկետները.

Թուրքմենստան (Աշգաբադ), 2019 թվական, ապրիլի 8-10-ը

4. Հրավիրող կողմը.

Առողջապահության համաշխարհային կազմակերպություն

5. Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը).

«Ոչ վարակիչ հիվանդությունների դեմ պայքարին նվիրված Առողջապահության համաշխարհային կազմակերպության եվրոպական բարձրաստիճան համաժողով: Ժամանակն է գործելու - հասնելու ոչ վարակիչ հիվանդությունների նպատակներին՝ Եվրոպայում կայուն զարգացումը ապահովելու համար». մասնակցություն համաժողովին:

Հիմնական նպատակն ուղղված էր ընդգծելու առաջիկա տարիներին ոչ վարակիչ հիվանդությունների հակազդմանն ուղղված միջոցառումների կարևորությունը՝ ներկայացնելով Հայաստանում ձեռնարկված քայլերը և համագործակցության առաջարկները:

6. Քննարկված թեմաները.

Միջոցառմանը հրավիրված էին մասնակցելու ԱՀԿ անդամ-պետությունների և ՄԱԿ բարձրաստիճան ներկայացուցիչներ, նախարարներ, միջազգային կառույցների և հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ, փորձագետներ:

Մասնակցությունը հնարավորություն ընձեռեց ուսումնասիրելու ոչ վարակիչ հիվանդությունների վերահսկման և կանխարգելման նոր մոտեցումներն ու հնարավորութունները՝ հետագայում Հայաստանում ներդնելու նպատակով:

ԱՀԿ եվրոպական տարածաշրջանի անդամ-պետությունների բարձրաստիճան ներկայացուցիչները և տեխնիկական փորձագետները ներկայացրեցին իրենց փորձը միջոցառումների իրականացման ուղղությամբ: Դրանք ուղղված են նվազեցնելու վաղաժամ մահացությունը: Քննարկվեցին նման հաջող փորձերի իրականացման հնարավորություններն այլ երկրներում:

7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը

Ոչ վարակիչ հիվանդությունների վերահսկման և կանխարգելման վերաբերյալ զեկույցով հանդես եկավ ՀՀ առողջապահության նախարար Արսեն Թորոսյանը: Վերջինս իր ելույթում շեշտեց, որ Հայաստանում ոչ վարակիչ հիվանդությունները (ՈՎՀ), մասնավորապես՝ սրտանոթային համակարգի հիվանդությունները, քաղցկեղը, շաքարային դիաբետը և շնչառական քրոնիկ հիվանդությունները առողջապահության համակարգի հարաճուն խնդիրներից են:

Ներկայացվեցին նշված ոլորտում Հայաստանի կողմից իրականացված աշխատանքները, գրանցած հաջողություններն ու հետագա քայլերը: Շեշտադրվեց փոխօգնության միջոցով համագործակցության իրականացման կարևորությունը:

Համաժողովին ներկայացվեցին զարգացող երկրների փորձն ու հեռանկարները ոչ վարակիչ հիվանդությունների հաղթահարման ուղղությամբ: Քննարկվեցին Առողջապահության համաշխարհային կազմակերպության և այլ գործընկերների հետ հնարավոր համագործակցությունը՝ համատեղ ներդրումներ, տեխնիկական աջակցություն ստանալու նպատակով:

Նախարարը հանդիպում ունեցավ Թուրքմենստանի առողջապահության և բժշկական արդյունաբերության նախարար Նուրմուհամմեդ Ամաննեպեսովի հետ:

Քննարկվեցին երկկողմ համագործակցության հնարավոր ուղղությունները, մասնավորապես առողջության առաջնային պահպանման, վարակիչ ու ոչ վարակիչ հիվանդությունների, միմյանց պացիենտների բուժման ոլորտում համագործակցության հնարավորությունը:

8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.

Համաժողովը հնարավորություն ընձեռեց ծանոթանալու ԱՀԿ անդամ-պետությունների առաջավոր փորձին և ներկայիս աշխատանքին, ինչպես նաև ուրվագծելու հետագա համատեղ գործողությունները՝ միջազգային փորձագետների կողմից առաջարկվող ուղղություններով:

Տարբեր երկրների առողջապահության ոլորտի ներկայացուցիչների հետ քննարկվեցին հնարավոր համագործակցության ուղղություններն ու հեռանկարները:

9. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

Առաջարկվեց պայմանավորված ուղղություններով ու կոնկրետ գործողություններով համատեղել երկրների ջանքերը և ակտիվացնել փոխգործակցությունը ոչ վարակիչ հիվանդությունների վերահսկման ու կանխարգելման ուղղությամբ:

10. Ստորագրությունը, ամսաթիվը:

X _____

2019թ. ապրիլի 11